

այնպիսի իրողութիւններ, որոնց մասին ոչ ոք չէր գիտեր: Գրեթէ ամբողջական թերթերէն: Գիտեմ մի գիւղ, որի կառուածատէրերը ոտնակոխ են առնում գիւղացու մարդկային արժանաւորութիւնը: որտեղ ամբողջ գիւղի երկսեռ անդամներ հողատիրոջ ձրի կամակատարներն են տարվայ ամեն ժամանակ: Կառուածատիրոջ տանը հարկաւոր է այսօր կանացի աշխատանք կատարել՝ կինն է գնում, վաղը հարկաւոր է այս մարդու ծառայութիւնը՝ այն է շտապում աղայի հրամանը կատարել: Մինչև անդամ երբ գիւղացին իր չարքայ կեանքի միակերպութիւնից ձանձրացած՝ դէօլ զուգահեռ զորքային մէջ գումարեցողութիւն է որոնում, աղայի զերազգաց նեարդերը գրգռվում են և նա բարկանալով հրամայում է լուսնիկը նշուազածով թիւնը... Գիւղացիները ստիպված են լինում հողատիրոջ հողը կապալով վերցնել՝ և այն էս այնպիսի գնում, որ որդրման գիւղացուն՝ կապալարարմը վճարելուց յետոյ՝ մնում է միայն մշակի օրական չնչին վարձը և երբեմն զրանից ևս պակաս: Գիտե՞լ լաւ է՝ երբ գիւղացին անմիջապէս յարաբերութիւն ունի հողատիրոջ իրան հետ: պատահում է որ այս կամ այն բաղդախնդիրը, այս կամ այն աշխարհակերը կապալով վերցնում է հողատիրոջից որոշ գիւղի արդիւնքը և նախապէս իր մուտքի նախահաշիւով ի նկատի է ունենում յայտնի գումար իբրև տուգանք գիւղացիներից ստացվելու: Եւ անա շահախնդիր կապալարուի ձարտարահիւս մեքենայութեամբ թաւկարդ է լարվում պարզամիտ գեղջուկի համար, որի մէջ վերջինս և ընկնում է զոյգ ոտքերով: Այսպիսով են անվերջանալի մէկեր, որոնք գիւղացու համար ժամանակի կորստեան և դրամական ծախսերի մշտական նիւթ են տալիս, իսկ դրա հակառակ կապալարուի համար կապում են արդիւնքի մի անսպառ աղբիւր: Անցնում են տարիներ և անա տեսնում էք, որ կապալարուին մի խոշոր գումար կորզեց գիւղացուց և դեռ որքան էլ պահանջում է այդ մշտապատրաստ վճարողներից... մնալին անխնայութեան համար՝ մէկ էլ տեսնում էք սկսում է կլոր գումարի պահանջ, գիւղացու նիւթական ոյժերը սպառվում են և անա դատաւարանական պաշտօնեան կատարման քիւրքով ստանում է օրհուտ: Կարծես իր արդիւնքով գիւղացու աղքատիկ գոյքը և ի վերջոյ՝ մեղքն ու նրան մուրացկանի մի պարկով դիմել զըթախիրտ անձանց օժանդակութեամբ...

Կան, ի հարկէ, և այնպիսի հողատէրեր, որոնք մտնելով գիւղացու դրութեան մէջ, վարվում են նըրա հետ ըստ խղճի: Բայց և այնպէս գիւղացու կրած տառապանքները շատ են և նրա կրած այդ տառապանքաց պատճառը ոչ այլ ինչ է, եթէ ոչ ընկերական ոգու բացակայութիւնը, անմիաբանութիւնը: Եւ ինչ համար, օրինակ, հայ գիւղացու հարեան դուխորը, մալականը չեն ենթարկվում նոյն ճնշումներին, նոյն վէճերին, որոնց մշտապէս զոհ է դառնում մեր գիւղացին: Դրա պատճառն այն է, որ դուխորը, մալականը գործում են համեմալաօրէն, սերտ ընկերութեամբ, այն ինչ հայ գիւղացին գործում է բաժան բաժան և դեռ շատ անգամ էլ մինը աշխատում է, իսկ միւսը քանդում: Եւ մինը աշխատում է զէսով ետ, իսկ ձուրդում: Եւ երբեք չենք տեսնում, որ իսկ ձուրդում է զէսով ետ, իսկ ձուրդում է:

Այդ զէսքից յետոյ ես ամբողջ երկու ամիս անկողնի միջից դուրս չեկայ: Ուղեղի բորբոքով չարաչար հիւանդացած էի: Շատ յետոյ իմացայ, որ այդ երկու ամիսայ մէջ իմ անունով Մանուկէից ստացած նամակները նրա մայրը ոչնչացրել է, և բաց յայդմանէ գրել է նրան թէ՛ ևս այս ինչ անձին մարդու եմ գնում: Հիւանդութիւնից յետոյ ես երկու թէ՛ երեք նամակ էի գրել նրան, բայց վերջերս յայտնվեցաւ, որ այդ նամակները տեղ չէին հասել: Այսպէս վերջանում է մեր նամակագրութիւնը:

Առողջութիւնս կամաց կամաց յետ էր գալիս, բայց այն օրերում ստուերի, ուրուակների նման չըջում էի արտաքին աշխարհում: Միշտ լուռ էի, եթէ հետս խոսէին, կարծ պատասխաններ կը լուսնէին՝ այդ, կամ ոչ: Ամբողջ օրերով աչքս ճանապարհի կը սպասէի: Դռները ամեն անգամ բաց ու խուփ լինելուց չուրաժ աչքերով կը նայէի, կարծում էի անա եկաւ: Ականջներս սրած՝ ամեն մի ձայնի, չուկի մէջ անխնայում էի աւետարան համբալին: Եւ միանգամայն հրաժարվում էի երեւակայելու, որ նա ինձ մոռացած լինի, նա ինձ սրտից հանած լինի, նա, որ այնպիսի երդումներով հաստատում, պնդում էր իր սէրը, նա, որ մէկ օր պարանոցից հանեց խաչը և երդվում էր

կը զէսով գետն: Նոյն երեւոյթի պատճառներից մինն էլ հայի անօրինակ անտարբերութիւնն է: Թողնեմք գիւղը, տեսնեմք ինչ է կատարվում քաղաքում, որտեղ իրաւունք ունենը յուսալ աւելի գործունէութիւն հասարակութեան զարգացումից: Մեր սովորական ժողովներում, որտեղ ընտրվում են ազգային դործոց պաշտօնեաներ, հասարակութիւնը, բաղում զէսքերում, կամ բացակայ է լինում, կամ շատ սակաւակիւն է յետոյ, երբ ժողովրդի անտարբերութեան պատճառով որ և է պաշտօնեայ տարբերութիւնն էլ դնելով իր և ազգային դրամի մէջ՝ անուշ է նստում մի գումար, կամ այլ դրա նման զէսքերում, մինը բամբասաւէր կանանց նման այս և այն անկիւնում խոսում ենք, իսկ գործի ժամանակ մինը դարձեալ խոսք ենք տալիս գործելուց: Ամենայն կենդանութիւն սպանող չինձ ինչը՝ ամենուրեք մեր հայերիս մէջ զարգացած է: Եւ անպատահել է շատ անգամ տեսնել թէ՛ ինչպէս գիւղացին՝ հաւաքած լինելով արքունական կառուածների հողերից դեռեալ տիկնային վճարով վերցրած հողի պայմանեալ դրամը, անտարբերութեամբ ուշացրել է և դրամով տուգանքների է ենթարկվել: Գիւղացու անտարբերութեան չնորոշ նրա ընտրած պաշտօնական անձինք ենթարկում են հասարակութեանը խոշոր ծախսերի: Նիւթը ամբան հարուստ է, որ այս հարցի վերաբերութեամբ կարելի է երբեք, շատ երկար գրել: Մի այլ անգամի թողնելով մանրամասն գրութիւնը գիւղական կանանց մասին, վերջացնում եմ ներկայ յօդուածը ասելով, հերքել է որքան սղիտութեանը հարկ տուեց գիւղացին, հերքել որքան անմիաբանութիւնը յարուցեց պաւրադաներ, որոնք վաւարի իման յինականի արիւն ծծեցին, հերքել որքան մեր գիւղացին դատարանների դռները մաշեց: Եւ արդե՞ք ճշմարիտ լուսաւորութիւնը օգնութեան պէտք է հասնի գիւղացուն, երբ պէտք է հայ քահանային կենդանի խօսքով ազդէ հասակաւորների սրտի վրա և երբ պարտաճանաչ ուսուցիչը մանուկների մատող սրտերում պէտք է սերմանէ մէր զէսի բարին, ազնիւը, գեղեցիկը, երբ պէտք է փորը ի շատէ կրթված գիւղացի երիտասարդը, չը խորշելով գիւղական չըջանի՝ վերադառնալ գիւղ իր համայնակիցներին ևս մասնակից չինելու իրաւունքներին և քաղաքակրթութեան բարեքննելին: սակայն, այս բնաբանը շատ հարուստ է և սրա մասին կարելի է խօսել առանձին յօդուածներով:

Խ. Մառանկոզեան

ՆԱՄՍԿ ԱՂԱՍՏԱՑԱՅԻՑ

Զուլիսի 15-ին
Երևանից-Մոսկովա բամբակի արտահանութիւնը սկսվելով իւրաքանչիւր սեպտեմբեր ամսից, դադարում է միւս տարվայ յունիս ամսում: Այս տարվան այդ սեզոնում ուղարկվեցաւ Ռուսաստան, բացառապէս Մոսկովա 30,847 հակ բամբակի թիֆլիսի վրա գնացել է մօտաւորապէս 4,000 հակ, իսկ Երևանում այս տարվայ բերքից մնացորդ կար անցեալ ամսվայ վերջերին մեր այնտեղ եղած ժամանակ 1,000 հակի չափ: Նշանակում է,

այդ խաչի վրա: Մագդալինան այդ ամենը տեսել լսել էր, և այժմ քոյր ու եղբայր լսել են, ձայն չեն հանում... Այսպէս ամեն օր, ամեն ժամ, ամեն բայէ կը մտաբերէի տեղի ունեցած ամենամանր հանգամանքները և նրա լուրթիւնը ինձ համար հանելուկ էր դառնում:

Տանջվում էի Անգործունէութիւնը կրկնապատկում էր իմ իմ անտապանքները: Իմ սրտի մուսկլայնայնանքներով ներկվում էր ամեն ինչ իմ շուրջը: Վաղ առաւօտվանից մինչև իրիկուն՝ ձեռքերս խաչած կուրծքի՝ զգում էի, որ օդը պակաս է գալի ինձ համար: Շնչառութիւնս խեղդվում էր: Անկեղծ չը գիտէի, չը գիտէի ում գիմն: Միակ Գեորգ Ղազարտեանն էր, նա էլ խեղճ վաղուց արդէն, նկատելով իմ մէջ եղած փոփոխութիւնները, հեռու էր պահում իրան: Բայց, երբ արդէն իմ տանջանալը չսփռ անցաւ, դարձեալ դիմեցի նրան. ամեն իմ ցուրտը նրան պատմեցի և խորհուրդ հարցրի թէ՛ ինչ անեմ:

—Այո, օրիորդ, օրիորդ, ասեց նա խորին ցաւակցութիւն արտայայտելով,—ախտս որ այդպէս տանջվելով կորչում էք: Փանի ժամանակ է անա, որ ես ձեզ յորդորում եմ մի որ և է գործով պարապել: Գործունէութեան մէջ դուք անշուշտ պիտի գտնէք այն, ինչ որ կորցրել էք,

որ Երևանի բամբակի այս տարվայ արդիւնքները: Եթէ իւրաքանչիւր հակը ընդունելու լինեք միջին թուով 7 պուդ, որպէս լինում է առհասարակ, եղել է մօտաւորապէս 251,000 պուդ, հետևապէս և Երևանի նահանգը բամբակի արդիւնքները: Երևանի նահանգում պարապում են հետեւեալ գաւառները՝ Շարուր, Սուրմալու, Գառնիքաւար և Զանգիբաւար: այդ գաւառներից իւրաքանչիւրը ունի մօտաւորապէս 100 գիւղ հայ և թուրք բնակիչներով: Բամբակի ցանքը սովորաբար սկսվում է մայիսի 1-ից:

Բացի Երևանի այդ գաւառների արտահանութիւնը, բամբակի այդ ընդհանուր գումարի մէջ մտնում են և հետեւեալները: Պարբերաբար ստացվում է իւրաքանչիւր տարի մօտաւորապէս 300 հակ Նախիջևանից, և 1,000 հակի չափ Պարսկաստանից (Զադեսարի և Մաքուրից):

Երևանի գլխաւոր արտահանութիւններն են՝ բամբակ, բրինձ, ցորեն, դարի, օղի, գինի և ձէլ (շիբախտ): Միայն Սուրմալուի գաւառից իւրաքանչիւր տարի արտահանվում է մօտաւորապէս 3,000 պուդ այդ ձէլից: Բրինձի արդիւնքները թիւրք հասնում է տարեկան 10,000 խաւարի (300,000 պուդի):

Երևանում յայտնի Թ. պատրաստում էր նշանաւոր գինեգործութեան գործարան, որը, անկասկած, իր տեսակի մէջ առաջինը կը լինի այդ նահանգում: Անցեալ ամիս նա արտահանել է Օղէս, սա, Բաթում և Մոսկովա 150 տակառ սպիրտ և 50 տակառ գինի: Գործարանը դեռ պատրաստ չէր:

Իմ առաջին նամակներից մէկում ես յիշել էի, որ Երևանից այս տարի մեծ քանակութեամբ գինի է սկսել արտահանվել զէսով Օղէսա. բայց մեծ մասը այդ գինիներից, որոնք գնացել էին Ռուսաստանի այդ կողմերը, ծախվել են համարեա թէ չնախապէս, որովհետև իրանք տանողները ծանօթ չեն եղել համարեա գինեգործութեան արհեստին, բացի մի երկուսից: Բաւական չէ միայն գինին տակառները լցնել և ուղարկել Օղէսա: Տարբեր կլիմայում, մասնաւոր ծովում, գինին ենթարկվում է զանազան փոփոխութիւնների, նրան պէտք է տեղ հասած ժամանակ պատրաստել, եթէ ոչ կարող է փչանալ, իսկ դուր համար հարկաւոր է գինեգործ և լաւ գինեգործ լինել:

Այս մի քանի ամիս երկաթուղու բաղադր, եթէ այդպէս ասեմք, բաւական քիւսաւ է, ասը բանքներ շատ քիչ են արտահանվում, իսկ դաւարկ վաճառներ որքան ուղում էք:

Ա. Ա.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Այս օրերս չնորհակալութեամբ ստացանք Խտալիայի Միլան քաղաքից երաժշտական հիտաւերի մի տետրակ, որ պարունակում է իր մէջ երեք հատ հայոց երգեր, հեղինակութիւն, կամ անելի լաւ է ասել փոխադրութիւն պիանոի համար: Կամ ընդհանրապէս (Camille Ronchi): Տետրակի վերնագիրն է «Chansons Arménienne», տալ-

այսինքն՝ հանգիստ սիրտ: Կոնզեր ես ձեզ համար դասեր գտնեմ...

—Ինչպէս ես պիտի դաս տամ, երբ ինքս ոչ չինչ չը գիտեմ, երբ իմացածս էլ մոռացել եմ:

—Пустая! Մեծ աշխատանք չի պահանջի ձեզանից կարևոր տեղեկութիւնները մտաբերելու: Վերջապէս պատրաստվեցէք ինքներդ... Ձեր ասած խօսածը երեխայութիւն է միանգամայն... Աստուծո առաջ ամեն ինչ, այդ աստիճան ենթակայ լինել սրտի զգացմունքներին: Կենդան յարատեւ ուրախութիւն չէ կարող ներկայացնել ձեզ: Նա ունի և իր տիւրը, սև օրերը. այդ ուր կը գնար, եթէ ամեն մարդ իր առաջին անաջողութիւնից ընկնէր այդպիսի յուսահատութեան մէջ, որպէս այժմ դուք էք յուսահատված: Մի բան ասեմ ձեզ. դուք դիտեք, որ ես շատ դասեր ունեմ: Այժմ իմ ժամանակն շատ ուշ է, վերջնական քընդունութիւններ պիտի տամ այս տարի: Կամնում էք ես ձեզ յանձնեմ մի ընտանիքում իմ դասերը: Երկու երեխայ են. երկուսն էլ պատրաստական դասատանը. հարկաւոր է ամեն օր երկու ժամի չափ սովորեցնել նրանց դասերը: Ամիսը կըստանաք քանի բուրդի: Դէ՛, վճռեցէք շուտով, համաձայն էք, թէ ոչ... Մտածելու ժամանակ չեմ տալի:

ված է Միլանում և նուիրված է պ. Կոնստանտին Շեքանցին: Տետրակը արժէ մէկ բուրդի կամ 3 Ֆրանկ և պարունակում է հետեւեալ երգերը. 1) Souvenir d'Erzeroum, 2) Souvenir de Kars և 3) Souvenir d'Erivan. Այդ երգերից առաջինը ամենից աջողված է. դա իսկապէս մեղ մօտ յայտնի կլիկիայի երգն է և բաւական լաւ է փոխադրված պիանոի համար: Ակօմպանիմենտը գրված է բարձր օղայի չափով և յիշեցնում է Մէնդելսոնի հուշակաւոր «Gondel-Lied» պիեսայի սկօմպանիմենտը:

ԽԱՆՔԻՆ ԼՈՒՐԵՐ մեղ գրում են: Յուլիսի 15-ին այստեղ պատահեց հետեւեալ գործութիւնը: Փանի մի ժամանակ սրանից առաջ գալիս է այստեղ մի հրէայ վաճառական և վարձում է մի խանութ: Մի ամիս մնալուց յետոյ, յիշած հրէան պատրաստվում է առաւօտեան կանուխ ճանապարհվելու և հինգ գիշերը մնում են խանութ մնայալտ գողեր ու ամբողջ ապրանքը 1,000 բուրդու արժողութեամբ և 280 բուրդի փող գողաւում են: Բարեբաղդաբար, պիւնտակի գործ գրած խիստ միջոցներ չնորհով ապրանքի մի մասը գտնվում է և գողերը բոլորն էլ յայտնվում են: Գործը ընդիշխն է յանձնված:

Մեղ գրում են, որ Խանքանդիի հայոց հասարակութիւնը մտադիր է այդտեղ հայոց ծխական ուսումնարան բանալ: Սպասում են առաջնորդի գալուն, որ այս օրերս պիտի այցելի Խանքանդի:

Մեղ հաղորդում են ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ հետեւեալ տեղեկութիւններ: «Տեղիս երկսեռ զպրոցները այս տարի հողաբարձութիւնը կառավարեց մի քանի ուսուցիչների օգնութեամբ, որոնք ձրիաբար յանձն են առել մի քանի առարկաներ աւանդել իրանց կարողութեան չափ: Այս տարի զպրոցների մուտքը եղել է 1,107 բուրդի, այլ և այլ աղբիւրներից, իսկ ծախսը 1,216 բուրդի: Ուրիմ զպրոցները 109 բուրդի պարտք ունեն:

Ստացանք չնորհակալութեամբ Պետերբուրգի Էդգես դրամատիկ և «Bibliographie Analytique des ouvrages de Brosset» հետաքրքիր գիրքը: Այդ գիրքը հրատարակել է հանգուցեալ վրացագէտ և հայագէտ պ. Բրոսսէի որդին, որ ինքն էլ արեւելագէտ է: Գիրքը պարունակում է հանգուցեալի թէ՛ ինքնուրոյն բոլոր աշխատութիւնների և թէ նրա առաջարկութեամբ Պետերբուրգի Աւագեմիայից հրատարակված գրքերի ցանկը: Գրքի սկզբում կայ մի առաջաբան և հանգուցեալ կապեմիկոս Բրոսսէի երկար կենսագրութիւնը: Զայտնի է որ հանգուցեալը Ֆրանսիացի է եղել և ծնվել է Փարիզում 1802 թին: Այնուհետև նա կանչվել է Ռուսաստան, որտեղ նա ահալէմիկոսի կոչում է ստացել, արեւելեան գրականութիւնը մշակելու համար: Բրոսսէ իր ամբողջ կեանքը նուիրել է զխաւորապէս վրացերէն հնութեան և վրաց լեզուի ու գրականութեան մշակելուն, բայց նա քիչ ծառայութիւն չարաւ և հայոց գրականութեան, պատմութեան և հնութիւն-

Ես համաձայնեցի: Մայրս շատ անբաւական էր ինձանից, որ ես վարժուեցի ինչ անում: Հայրս ոչինչ չասեց, բայց ես նկատում էի, որ նրա տիւրը պատկերը աւելի տխրել էր: Ըսկըում ես առանձին սէր չէի զգում զէսի իմ գործունէութիւնը, բայց յետոյ, երբ խորատուգվեցայ այդ պարապմունքների մէջ, ես ամբողջ սըրտով անձնատուր եղայ նրան: Ինքս տանը սովորում էի, յետոյ գնում էի սովորեցնում: Մի տարվայ մէջ ես քաղաւած արեցի սը. Ղունէի զըպրոցի ամբողջ դասընթացը: Դասերս շատացան, օրն ի բուն կը վաղէի մի դասից միւս դասը: Այսպէս նոր ոտի էի կանգնել, երբ միւս հարւած ստացայ. հայրս կարճատև հիւանդութիւնից յետոյ վախճանվեցաւ: Այսուհետև իմ դասերը անհրաժեշտ կարևորութիւն ստացան. խօսքը եկել էր ապրուստ հայթայթելու վրա: Հօրս մեղ համար թիւրած պենսիան մեր կարիքներին բաւականութեամբ տալ չէր կարող: Երեք հոգի էինք, և տասն և ութ մանէթ քառասուն եօթը կօպէկը, որ մենք ստանում էինք, շատ քիչ էր մեղ համար: Մինչև այժմ էլ չեմ կարողանում հասկանալ թէ՛ այդ քառասուն եօթն կօպէկին էլ ինչ էր:

(Եւ չարեւակով)

ներքին հետազոտությունն ու մշակելուն: Գիրքը արդարև և՛ լավ և՛ շատ մաքուր և գեղեցիկ կերպով Պետերբուրգում, գիտությունների կայսերական Ազգային միայն տպարանում և պարունակում է իր մէջ 704 երեսներ: Բրտսէի գործունէութիւնը շարունակվում էր 1824 թիւից մինչև 1879 թիւը: Պէտք է զարմանալ թէ մի մարդու գործունէութիւնը և՛ արտադրանքը և՛ պտղաբեր լինելը: Քիչ է աստիճան կարող է պտղաբեր լինելը: Քիչ է պատահում տեսնել որ մի մարդ այդքան բազմաթիւ ուսումնական գրութեան արդիւնաբերէր, որքան հանգուցեալ Բրտսէի: Հրատարակված գիրքերը մի թանգազին օժանդակելի միջոց կարող է համարվել այն բոլոր անձանց համար, որոնք զբաղվում են կովկասեան և անդրկովկասեան, ինչպէս նաեւ ինքնուրուի պատմութեամբ, լեզվաբանութեամբ և հնագիտութեամբ:

Այս օրերս թիֆլիսում վախճանվեցաւ Ալեքսանդր Պոլոսեան ջանքերով իր հանգուցեալ բարեգործական նպատակով կտակել է երեք հազար ռուբլի, և ինչպէս լսում ենք, այդ երեք հազարից մէկ հազարը կտակված է Ներսիսեան դպրոցին, իսկ մնացած երկու հազարը խնամակալին, Սևանայ վանքին և թիֆլիսի Գայեանեան ու մի քանի ուրիշ դպրոցներին:

Կովկասեան ուսումնարանական շրջանի հոգաբարձութիւնը յայտնում է ընդհանուր տեղեկութեան համար, որ ժողովրդական լուստարութեան պ. միջնորդը, անհրաժեշտ համարելով մեծացնել գիմնալիաների և պրօգրիմնալիաների մասնաւոր միջոցները այն ծախսերը ծածկելու համար, որոնք հարկաւոր կը լինեն վերսկիւնալ ուսումնարաններում ուսման առաջադիմութիւնը բարձրացնելու և աշակերտներին վրա հսկողութիւնը մեծացնելու ու նրանց բարոյականութեան վերա ներգործելու համար, թոյլատրեց աւելցնել կովկասեան ուսումնարանական շրջանի գիմնալիաներում և պրօգրիմնալիաներում եղած ուսման դիմանքով, 1887/8 ուսումնական տարւոյ սկզբից, մինչև 40 ռ. տարեկան իւրաքանչիւր աշակերտից, բացի Կուբանի գիմնալիայի այն աշակերտները, որոնք պատկանում են կողակներին զասակարգին:

Տեղական ուսաց լրագիրները հազորդում են, որ յուլիսի 29-ին, գիշերը, անցյալ աւաղաներ կողպտել են թիֆլիսի Բեթլեհեմ եկեղեցին: Գողթը տարել են արծաթեայ և ոսկեայ շատ իրեր և զանազան թանգազին քարեր: Թանգազին քարերով պատած ս. Աստուածածոր մեծ պատկերը կատարելապէս մերկացրած է: Եկեղեցին կողպտված է շինած բանալիներով, չը նայելով որ եկեղեցու բակում երեք սպասարաններ կան:

Բաթումից «KABAZ» լրագրին հեռագրում են, որ պատերազմական միջնորդ Վանդուկի յուլիսի 29-ի գիշերը ճանապարհ ընկաւ «Երիկիկ» շոգե-նաւով, որին ճանապարհ գցեցին Բաթումի բոլոր պաշտօնատար անձինքը: Նորին բարձր ղեկավարութիւնը, իր Բաթումում եղած ժամանակ, քննեց զօրքերը և քաղաքի ամրութիւնները:

Մի քանի օր առաջ Պոլսի «Արեւել» լրագրին վերցնելով հաղորդեցին, որ Մաղաբա եպիսկոպոս Օրմանեան նշանակված է Եջմիածնի ճեմարանի վերապետութիւն: Այժմ նոյն լրագրը հազար-գում է, որ Օրմանեան եպիսկոպոսին տրված է ոչ թէ վերապետի պաշտօնը, այլ աստուածաբանական գիտությունների ուսուցչի պաշտօնը: Զարուծիւն պատրիարք համաձայնել է Օրմանեանին արձակել կարնի առաջնորդի պաշտօնից, և Եջմիածնի գալով Օրմանեան պէտք է մնայ թիւրք-բաշկապետի, ինչպէս երևում է Կաթողիկոսի այդ առիթով տուած կոնդակից:

Կիրակի, օգոստոսի 2-ին, պ. Տէր-Կաթեան, հայ դերասանների մասնակցութեամբ, Կոմիտասի կիւղի ամարային բնակարանում կը տայ մի ներկայացում: Կը ներկայացնեն «Օսկան Պետրովիչը գիտնական», «Պոլսեան պատմիկը» և «Այ Քեզ օյն»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿՕՐՈՒԳԻ ՊԻՆՏՈՐ

Կօրուրդի պրինցը Բօլքարիւն է գնում, — ահա այն լուրը, որ բերում են վերջին հեռագիրները:

Գիւլումարական անհամաձայնութիւններից յետոյ, պետութիւնների այդ մասին ունեցած տարաձայնութիւններից յետոյ և վերջապէս Կօրուրդի պրինցի վերջին ամիսներում բռնած ընթացքից յետոյ՝ այդ ճանապարհորդութիւնը մի առանձին նշանակութիւն է ստանում Պրինց Ֆերդինանդը արդէն մօտ է Սօֆիային. նա Տուրն-Վէլերից հասաւ Օրչօֆ, որտեղ նրան դիմաւորեց միջնորդ Նաչիլիչ. այդտեղից նա գնում է Բօլքարիւն, որի սահմանների վրա պատրաստվում են նրան դիմաւորել բօլքարական միջնորդները և ինսամակարձերը: Գիտար չէ գուշակել, որ շատ շուտով նա Սօֆիա կը մտնի, և բազմելով իշխանական դահլիճ վրա՝ կը սկսի մի շարք կարգադրութիւններ և փոփոխութիւններ անել: Բայց արդեօք դրանով էլ կը վերջանայ բանը. արդեօք Կօրուրդի պրինցի Սօֆիա մտնելը նոր տարաձայնութիւնների ծանա-պարհ չը պէտք է բաց անի: Մինչև այժմ եկած տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ Կօրուրդի պրինցի գնալը մի քանի երկրներում անախորժ տպաւորութիւն է թողել: Պետերբուրգի «Journal de St. Pétersbourg» կիսապաշտօնական լրագիրը պրինցի Բօլքարիւն գնալը համարում է մի ցաւալի դէպք, որը չէ կարող լուծել բօլքարական խնդիրը: Ռուսաց կառավարութիւնը համաձայնութիւն չէ տուել պրինցի Բօլքարիւն գնալուն. պաշտօնական կերպով համաձայնութիւն չէ տուած ոչ թէ միայն Բ. Գրան, այլ նոյն իսկ Գերմանիայի, և մինչև իսկ Աւստրիայի և Ռուսիայի պետութիւնների կողմից: Քանի պրինցը մօտենում է Սօֆիային, այնքան էլ դժուր է դրութիւնը լարվում է. և երբ պալական պետութիւնների Ռուսիայի հիւպատոսները վճռել են չը ներկայանալ պրինցի ընդունելութեանը. — դա մի զօրեղ ցոյց է: Սակայն այդ բո-լորից յետոյ առաջ է դալիս և մի ուրիշ հարց, այդ այն է, թէ արդեօք այդպիսի վճռական քայլ անելով, պրինցը իր յայտ միայն Բօլքարիւն, իր վրա է դնում, թէ այդ բոլորի մէջ խառն է մի ուրիշ պետութեան մասը, որը կամենում է իրագործել տալ բօլքարական աղգային ժողովի վճիռը: Նրան է, որ Բօլքարիւն յոյս ունի մի կամ մի քանի օտար պետութիւնների պաշտպանութեան վրա. — բայց չէ կարելի չը նկատել, որ հէնց այդ իրողութիւնը ևս կարող է խառնաշփոթութիւններ առաջ բերել...

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԻՍԻԱՅԻՑ

Կ. Պոլսի, 22 յուլիսի
Այնպէս իմն թուի թէ՛ Նրուսաղէմի Պատրիարքին անխալ կամ սխալական լինելուն վրայ կը վիճարանէր Ազգ. Ժողովը անցեալ ուրբաթ օր յուլիսի 18-ին: Նրուսաղէմայ միաբնակութեան ներքին կանոնադրին էր որ ընտրութեան նիւթ էր Ազգ. Ժողովը վերջի նստին մէջ. շարունակու-թիւն էր և պիտի մնայ շարունակութիւնը Այժմ պէտք է սպասել այդ կանոնադրի ընտրութեան աւարտման, որպէս զի Գարուծիւն Պատրիարք ալ, իբր Նրուսաղէմի Պատրիարք, երթայ բազմիւ իր աթոռը:

Նախ քան Պատրիարքի հրաժարականը, հրաժարեցաւ Նուրեան էֆէնդի 1885 յուլիս 15-ին պաշտօնի անցած էր, 1887 յուլիս 18-ին կաւարտի իւր պաշտօնավարութիւնը, ինչպէս նաև իւր ընկերակցաց: Մի քանի շաբաթուան մէջ պիտի գումարի Սֆ. Ժողովը ընտրելու համար նոր քաղ. Ժողովը: Չնք կարծիք որ լաւ ընտրութիւն մը կատարուի: Ազգային գործոց զուտ պիտի դրուին պետական հայ անձինք, ոչ չունեն այն յատկութիւնները, զոր կը փախագէտը թէ ունենային: Պարագանքը ծանր են. բայց գրեթէ անհնար է դնել այնպիսի անձինք, ոչ օժտուած լինին հաստատ բնաւորութեամբ, անշահախնդիր ոգով, զարգացած իրողով, ազնիւ սրտով և կառավարեն սզգը: Որքան ալ Նուրեան էֆէնդիի հակառակորդն եղած լինիք, սակայն չենք կրնար ուրանալ, որ վարչական հեղինակութիւն ունեցող անձ մ'է, թոյլ մարդ չէ, գործերը կանոնաւորելու փափագող և ընդունակ, աշխատասէր և իսկ մը խնդիրներ ուժով կերպով պաշտպանեց յօգուտ աղգին: Մենք կրկնենք թէ Նուրեան էֆէնդիի յաջորդներն շատ տկար լինեն, Նուրեան էֆէնդիի Երեւանի և Կոնստանդնուպոլիսի ղեկավարութիւններէն զուրկ. իսկ ինչ որ թերութիւն է, անհամաձայնութեան առաքկայ է դարձեալ, նոքա ևս նոյնը լինին:

Այս շաբաթուան հետաքրքրութեան գլխաւոր խնդիրն եղաւ հանգուցեալ պ. իզմիրեանցի կտա-

կին գործադրութիւնը: Ինչպէս յայտնի է, հանգուցեալ իզմիրեանցը 20,000 ռուբլիի կտակ մը ընելով Պոլսի հայոց Պատրիարքարանի տրամադրութեան ներքեւ դրած է այդ գումարի տոկոսը, որոյ կէսը պէտք է յատկանայ Կարնոյ կամ Մշոյ մէջ աղջկանց վարժարանի մը — ինչ որ արդէն եղած է — և կէսը «բաշխուի աւ ըստ ամէ ի մըր-ցանակ աղջկային զբաղակութեան և պատմութեան վերաբերեալ լաւադրոյն երկաթիւրութեանց հեղինակներուն»: Այդ մրցանակի բաշխումը կատարուեցաւ յուլիսի 18-ին, յետ Ազգ. Ժողովը նստին, Պատրիարքարանի արահին մէջ: Ամբողջ գումարը — գրեթէ յատկացեալ — 1380 ֆրանկ էր: Մի քանի 805 ֆրանկ (35 ոսկի օսմ) ընդունեց պ. Միրախորեան, իւր «Նկարագրական ուղևորութիւն ի հայաբնակ գաւառ» գրքին համար, իսկ մնացեալը 575 ֆրանկ (23 ոսկի) պ. Ալլահվերդեանի գրքին:

Ներկայացուած ձեռագիր թէ տպեալ հինգ հատ եղած են: Մին հ. Ս. Տէրվիշեանի «Հնդեւոր-պական նախալուր» հմտալից գործ, բայց դուռ հայկական նիւթ մը չէ, հետեւաբար մրցանակի արժան չէ սեպուած: Ներքորդն եղած է ձեռագիր թատերգութիւն մը «Փառանձմ և Ողիմպիա» հեղինակ էմ. Նալբան: Այս գրութեան ալ թատերադրութիւն լինելով, արժանի չէ սեպուած: Պէտք է երևակայել որ «Հնդակ ոսկեղէն դպրու-թեան» մասնագիտ Կարմիրեան Կարմիրեան մրցանակի մասնակցելու ապշութիւնն ունեցած են և ներկայացուցած են իրենց հրատարակու-թիւնը, բայց մերժուած է:

Պ. Միրախորեանի և պ. Ալլահվերդեանի գրեթէ մրցանակ տրուած է նախ առ ի չգոյ է լաւագոյնին, յետոյ մի քանի հմուտ անձանց կարծիքներն ալ ընել է վերջ:

Այս յայտնուած կարծիքներու առթիւ թերեւ ուրիշ թղթակցութեան մը մէջ խօսինք:

Մի քանի օրէ ի վեր աստ կը գտնուի պ. Կա-րա-Մուրադ, որ վաղը կը մեկնի ի Վանատիկ, ուր պիտի անցնէ երեք շաբաթ և յետոյ պիտի վերա-դառնայ ի Պոլսի:

Պ. Կարա-Մուրադ շատ լաւ և սիրալիր ընդունելութիւն գտաւ աստ. տեսակցեցաւ քիչ ժամանակի մէջ ամեն ծանօթ անձանց հետ. այցելեց իրենց Զարուծիւն, Գարուծիւն Պատրիարքի, Ա. զարեան Պատրիարքի, ամենուրեք իւր ձեռնարկի մասին խօսակցեցաւ և իւր խոսքին համար շատ նիւթեր հաւաքեց և պիտի հաւաքէ: Կարծեմ թէ պ. Կարա-Մուրադ գոհունակութեամբ պիտի վերադառնայ ի հայրենիս, հաւաքելով ինչ որ պէտք է իրեն:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— Խտակական աղտոտման մասով շատ թեւ-նամաբար է վերաբերվում այն ընթացքին, որին այժմ հետևում է վատկանք: Մի քանի լրագիր-ներ մինչև անգամ պատի մի քանի վարմունքները սպորտին գտնելով, հրաւիրում են կառավար-ութեանը վերջ տալ վատկանքի դանազան դըր-գուի ցոյցերին:

— Գալիցիայում հողային հարցի պատճառով գիւղացիները շարունակում են խառնակութիւն-ներ անել: Մի քանի տեղերում ժողովուրդների և գիւղացիների մէջ պատահած կռիւների ժամա-նակ մարդիկ սպանվեցան: Գիւղացիք սպանեցին մի քանի կալուածատէրերին: Յուլիսի 2-ին տեղը երկաթուղու արագընթաց գնացքով զօրք է զերկ-ված:

— Կրիտէ կղզու խնդիրը առ այժմ խաղաղ վախճան ունեցաւ: Բ. Գուրը դրա համար նոր-հանկարծիւն յայտնեց յունաց կառավարութեան-հը, որը կղզու քրիստոնեայ ազգաբնակչութիւնը հանգստացնելու մէջ մեծ դեր կատարեց:

— «Italie» լրագիրը հաղորդում է, որ նոր մի-նիստութիւնը կը շարունակի ընկնալ իր նախորդի քաղաքականութեամբ, մասնաւոր արտա-քին քաղաքականութեան վերաբերեալ գլխաւոր հարցերում:

— «Figaro» լրագիրը հաստատ աղբիւրներից տեղեկացել է, որ գերմանական թագաժառանգի աւտովութիւնը շատ վտանգաւոր դրութեան մէջ է:

— Աւստրիայում բնակվող զանազան աղգու-թիւնները շարունակում են կուռել աղգային ինք-նուրոյնութեան և իրաւունքների մասին: Այդ կուռ-արտայայտվում է թէ մամուլի մէջ, թէ կառա-վարչական շրջաններում, և թէ նոյն իսկ դպրո-

ցական գործում և հասարակութեան մէջ: Աւստ-րիական պաշտօնական մամուլը բաւական ուշա-դրութիւն է դարձնում այդ ներքին, այսպէս ա-սած, աղգայնական շարժումների վրա, և միշտ կրկնում է, որ պէտք է վերջ տալ այդ բոլորին: Ինչպէս երևում է պաշտօնական օրգանների մէջ սպորտած տեղեկութիւններից, կառավարութիւնը միջոցներ է որոնում այդ շարժումները դադա-րեցնելու համար: Վիեննայի մի քանի լրագիրներ հաղորդում են, որ մինչև անգամ Գալիցիայի տե-սակցութեան ժամանակ խօսք է եղել այն մա-սին, թէ ինչպէս պէտք է սանձահարել Աւստրիա-յի սահմաններում եղող սլավոն աղգերին:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Ամերիկայում գուրս եկաւ մի գիրք, բաղկա-ցած 600 երեսից, որի բովանդակը աշխա-տում է ապացուցանել, որ տաղանդները և հան-ճարները իրանց գլխին մաղ չեն ունենում, այլ ճաղատ են լինում: Բովանդակը մինչև ան-գամ իր այդ խօսք թէօրիւն ապացուցանելու համար օրինակ է բերում զանազան ժամանակնե-րի ճաղատ գրողներին և նշանաւոր մարդոց: Այդ խօսք հեղինակի կարծիքով, մտաւոր դարգացու-մը ուղիղ յարաբերական է ճաղատութեան, և հանճարները չը պէտք է մաղ ունենան իրանց գլխին: 600-երեսանոց այդ գիրքը ընթերցաւոր ամերիկացին կարդում է մի փոքր ծիծաղելու համար:

Պետերբուրգում 1881 թիւն կատարված ժողո-վրդագրութիւնից երևում է, որ այդ քաղաքում կայ 154 հազար տղամարդ և 172 հազար կին, որոնք ընդունակ են ամուսնանալու: 1881 թիւն եղել է 5,739 ամուսնութիւն, 1884-ին 6,234 ամուսնութիւն, իսկ 1885-ին 5,978 ամուսնութիւն: Այդ ստատիստիկական տեղեկութիւններից պարզ երևում է, թէ որքան փոքր տոկոս են կաղում ամուսնացողները:

Հեռախօսը (տեղեֆօնը) մուտք ունեցաւ մինչև իսկ փարաւօնների հայրենիքի մէջ, որտեղ արդէն գոյութիւն ունեն մի քանի հեռախօսական գծեր: Թիւրքաց կառավարութիւնը արդէն թոյլատրեց մի ամերիկական ընկերութեան հեռախօսական գծով միացնել Կայրիէն Ալեքսանդրիայի հետ:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՑ

Վիեննա, 29 յուլիսի: Այսօր, առաւօտեան 9½ ժամին, Կօրուրդի պրինցը պետական երկա-թուղու արտակարգ գնացքով Մարիւնից գնաց Տուրն-Վէլերին:

Վիեննա, 29 յուլիսի: Խօսելով Կօրուրդի պը-րինցի Բօլքարիւն գնալու մասին, և անկարող լի-նելով մասնաւոր անելու թէ երբ տեղի ունեցաւ նրա գնալը, այստեղի լրագիրների մեծամասնու-թիւնը համարեա միաձայն ասում է, որ իշխանը այդպիսի մի որոշում ընդունեց իր սեփական ոչ-ժերի վրա յենկելով: «Fremdenblatt» լրագիրը յայտնում է, որ այդ վճիռը պրինցը ընդունել է, առանց խրախոյս ստանալու պետութիւնների կողմից և առանց Բ. Գրանի համաձայնութեան: Հրա վարմունքը — ասում է իշխալ լրագիրը, — չէ համաձայնվում Բերլինի դաշնագրի որոշումնե-րի հետ, որոնց վրա մի քանի շաբաթ առաջ նա ինքը մասնաւոր էր անում մի առանձին ուշադ-րութեամբ: Առ այժմ հրապարակի վրա մի հա-մարձակ ձեռնարկութիւն միայն կայ, որը պա-րունակվում է Կօրուրդի պրինցի Բօլքարիւնի վե-րաբերեալ արարքների մէջ:

Պետերբուրգի, 30 յուլիսի: Կօրուրդի պրինցի Բօլքարիւն գալու առիթով «Journal de St. Pé-tersbourg» ասում է. «Մեղ թուում է, որ այդ գը-նալը մի նոր ցաւալի միջոցնէ պէ, իբրեւ լրա-ցուցիչ այն բոլորի, որոնցով այնքան հարուստ է բօլքարական իշխանութեան նոր պատմու-թիւնը: Մեր կարծիքով, պրինցի Բօլքարիւն գնալը ոչ մի կերպով չէ վճռում բօլքարական խնդիրը, պէտք է սպասել թէ ինչ ընթացք կը բռնեն անցքերը այդ երկրում, որը արդէն հն-թարկվել է շատ վտանգաւոր դրութեան մէջ: Պօլսի մեր դեսպան Ներիշով: Պետերբուրգի ֆը-րանսիական դեսպան Լաբուէ իր ընտանիքով ուղևորվեցաւ այստեղից՝ երեք ամսվա արձակուր-դով:

ՕՐԾՈՎՈ, 30 յուլիսի: Այսօր, կէս գիշերվայ մօտ, այստեղ հասաւ Կօրուրդի պրինցը, որը գի-շերը պէտք է գնայ Բօլքարիւն:

Тилогрѣзія Канцеляріи Главнонач. Гражд. час. на Кавк., Лорисъ-Меликовская ул. д. ваз.